

**«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի  
Փոքր դրամաշնորհների հայտի ձև**

Ծրագրի անվանումը	“Հակակոռուպցիոն կրթության և բարեվարքության ամրապնդման մշտադիտարկում ՀՀ Բուհերում”:
Դիմող կազմակերպության անվանումը	«Էլեգիա» մշակութային հասարակական ՀԿ
Կոնտակտային անձ և կոնտակտային տվյալներ	Հարություն Ալեքսանյան: <a href="mailto:h_aleksanyan@yahoo.com">h_aleksanyan@yahoo.com</a> ԲԶԶ. +/374/ 91 50 4148
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)	Ք. Երևան, Քաջազունի 4/15, Կենտրոն համայնք
Ծրագրի տևողությունը	<b>2 ամիս</b>
Ծրագրի հակիրճ նկարագրիրը	Ծրագիրը նպատակ է հետապնդում մշտադիտարկման միջոցով ուսումնասիրել բարձրագույն ուսումնական հաստատություններում հակակոռուպցիոն ուսուցման արդյունավետությունը և գործնական առաջարկություններ ներկայացնել ԲՈՒՀ-երում բարեվարքությունը ամրապնդման և կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման ուղղությամբ:
ԻՀԱ-ից պահանջվող Գումարի չափը	<b>865 200 դրամ</b>
Ներդրման գումարի չափը	<b>400.000 դրամ</b>
Ծրագրի բյուջեն (նշել դրամով)	<b>1 265 200 դրամ</b>
Ծրագրի գործընկեր կազմակերպությունը (եթե առկա է)	<b>Առկա չէ</b>

**Դիմող կազմակերպության/ների նկարագրություն (առավելագույնը կես էջ)**

«Էլեգիա» մշակութային հասարակական կազմակերպության / գործում է 1999թ./ գերակա խնդիրներից է խթանել կրթության զարգացմանը, կրթության և մշակույթի ոլորտներում օժանդակել օրինավորության, բարեվարքության սկզբունքների պահպանմանը և կիրառմանը: Կազմակերպությունը առաջնահերթ նշանակություն է տալիս հանրապետություն բարձրագույն, միջին մասնագիտական և հանրակրթական կրթության բնագավառում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելմանը: « Էլեգիա» միավորում է կրթության ոլորտում բազմափորձ մասնագետների, դասախոսների և փորձագետների: ՀԿ-ի նախագահն է Հարություն Ալեքսանյանը, որն 8 տարուց ավել աշխատել է «Ինթեգրթի Էքշն» բրիտանական միջազգային կազմակերպությունում, որպես Բարեվարքության Կրթական Ցանցի տարածաշրջանային մենեջեր Եվրոպական և Կենտրոնական Ասիայի երկրների գծով: Կազմակերպությունը իրականացրել է ծրագրեր հանրապետության բուհերում բարեվարքության կրթական ծրագրերի ներդրման և գիտատեսական միջազգային գիտաժողովներ կազմակերպելու և ժողովածուներ հրատարակելու ուղղությամբ: Կազմակերպությունը ունի 15 կամավորներ, այդ թվում ուսանողներ, որոնք օժանդակել են «Էլեգիա»-ին հետազոտություններ և սոցիոլոգիական հարցումներ անկացնելու ուղղությամբ: «Էլեգիա»-ին մասնակցել է ԻՀԱ-ի կողմից կազմակերպված հակակոռուպցիոն ուսուցումներին և ՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի անդամ է:

**Ծրագրի նկարագրություն**

Հայաստանի հանրապետության կրթական համակարգը բացառիկ դեր է խաղում Հայաստանի **Օրինավորության Ազգային Համակարգում**: Այն հանդիսանում է նրա կարևոր հիմնասյուններից մեկը: Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի բուհերում ներդրվում են բարեվարքության ծրագրեր, աշխատանքներ են տարվում ԲՈՒՀ-երում էթիկայի կանոնագիրք ստեղծման և կիրարկման ուղղությամբ:<sup>1</sup> 2009 թ. սկսած Հայաստանի շուրջ 50 ԲՈՒՀ-եր դարձել են “ Ինթեգրիթի Էքշն” բրիտանական կազմակերպության Բարեվարքության Կրթական Ցանցի անդամներ և մասնակցել են սեմինարների, դասընթացների, կոնֆերանսների, կլոբ սեղանների և այլ կարգի միջոցառումների: Համաձայն “ Ինթեգրիթի Էքշն”-ի և վերոհիշյալ ԲՈՒՀ-երի միջև կնքված հուշագրերի, նրանք իրենց ուսումնական ծրագրերում ընդգրկել են դասընթացներ բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաների ուղղվածությամբ:

Կոռուպցիայի դեմ պայքարը, որպես իր ռազմավարության առաջնահերթություն է սահմանել նաև ՀՀ Գիտության և Կրթության նախարարությունը: Այդ ամենի հետ մեկտեղ, պետք է նշել, որ Հայաստանում կրթության ոլորտը դեռևս մնացել է ամանաշատ կոռումպացված ոլորտներից մեկը և բոլորվին էլ պատահական չէ, որ հանդիսանում է 2015-2018 թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության այն չորս ոլորտներից մեկն է , որտեղ կառավարությունը կոնկրետ ռազմավարական խնդիր է հետապնդում՝ նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը և արմատախիլ անել կոռուպցիան:

Սակայն, համաձայն “ Թրանսփարենսի Ինթերնեշնալի “ Հայաստանի Օրինավորության Ազգային Համակարգի 2014 թ գնահատման կրթության ոլորտը կոռուպցիայի դեմ պայքարում իր դերակատարումով ստացել է ամենացածր գնահատականը -0:<sup>2</sup>

**Ծրագրի նպատակները**

- “Հակակոռուպցիոն կրթության և բարեվարքության ամրապնդման մշտադիտարկում ՀՀ Բուհերում” ծրագիրը նպատակ է հետապնդում մշտադիտարկման միջոցով`
- 1/ Ուսումնասիրել ԲՈՒՀ-երում իրականացվող բարեվարքության գծով դասավանդվող առարկաների արդյունավետությունը,
  - 2/ Պարզել թե ինչպես են ուսանողները կարողանում գործնականում կիրառել պրակտիկայում բարեվարքության գծով իրենց ստացած գիտելիքները և հմտությունները,
  - 3/ Ուսումնասիրել ԲՈՒՀ-երի ադմինիստրացիայի և համապատասխան պետական կառույցների միջոցառումների արդյունավետությունը կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման ուղղությամբ:

**Ծրագրի ուղղակի շահառուներն են**

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը /ԲՈՒՀ-երը,/ ուսանողները նրանց ծնողները, ՀՀ Գիտության և կրթության նախարարությունը և այլ համապատասխան տեղական և միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան:

**Ծրագրի անուղղակի շահառուներն են**

Ամբողջ հասարակությունը, ՀՀ Կառավարությունը

**Ծրագրի իրականացման մեթոդաբանությունը**

- Ծրագիրը իրականացնելու համար նախատեսվում է կիրառել հետևյալ մեթոդաբանությունը:
- ա/ սոցիոլոգիական հարցումներ պատահական ընտրությամբ ընտրված համալսարանների ուսանողների, դասախոսների և ծնողների շրջանում,
  - բ/ հարցազրույցներ ԲՈՒՀ-երի ադմինիստրացիայի շրջանում
  - գ/ հարցազրույցներ ՀՀ Գիտության և կրթության նախարարության համապատասխան

---

<sup>1</sup> Տես Եվրոպայի Խորհրդի”Հայաստանի Բարձրագույն Կրթության համակարգում Բարեվարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքար” ծրագիրը  
<sup>2</sup> Հայաստանի Օրինավորության Ազգային Համակարգի Գնահատում 2014, էջ. 102

պաշտոնյաների շրջանում  
 դ/ հարցազրույցներ ՀՀ Կառավարության Հակակոռուպցիոն բաժնի աշխատակիցների հետ

**Ծրագրի տևողությունը**

Ծրագրի տևողությունն է երկու ամիս և մեկ շաբաթ: 2016 թ ապրիլի 1-ից –հունիսի 7-ը:

**Ակնկալվող արդյունքերը և ազդեցությունը**

Ծրագրի ավարտին ակնկալվում է, որ մշտադիտարկման և ուսումնասիրությունների արդյունքում կիրառարակվի համապարփակ հետազոտություն/ հաշվետվություն, որտեղ կշարադրվեն.

ա/ մշտադիտարկման արդյունքում ձեռք բերված և համակարգված հայտնաբերումները, բ/առաջարկություններ ԲՈՒՀ-երում կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման ուղղությամբ, գ/ առաջարկություններ 2015-2018 թթ հակակոռուպցիոն ռազմավարության և դրանց գործողությունների իրականացման ուղղությամբ **կրթության ասպարեզում:**

դ/ ծրագրի արդյունքում կատարված հետազոտության տարածում ԲՈՒՀ-երի և բոլոր շահառու կազմակերպությունների շրջանում:

Ակնկալվում է , որ իրականացված ծրագրի արդյունքում ՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան կստանա կոնկրետ առաջարկություններ կրթության բնագավառում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման ուղղությամբ, որոնց իրականացման պարագայում էապես կամրապնդվի բարեվարքությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում:

**Ժամանակացույց**

Շաբաթ	Գործողություն
1-ին	Ծրագրի իրագործման նախապատրաստում: Ծրագիրը իրականացող թիմի հանդիպում, աշխատանքի բաժանում, գրասենյակի կազմակերպում և այլ կազմակերպչական հարցեր:
2-րդ	Մշտադիտարկման հարցաթերթիկի պատրաստում և ծրագիրը իրականացող թիմի անդամների հետ քննարկում, համաձայնեցում:
3-րդ	Հարցազրույցների անցկացում մշտադիտարկման համար ընտրված համալսարանների և կրթական հաստատությունների ադմինիստրացիայի և դասախոսների հետ
4-րդ	Սոցիոլոգիական հարցման անցկացում այդ նպատակով արդեն ընտրված ԲՈՒՀ-երի ուսանողների շրջանում
5-րդ	Մշտադիտարկման արդյունքների ամփոփում / համաձայն սոցիոլոգիական հարցման և հարցազրույցների արդյունքների
6-րդ	Մշտադիտարկման արդյունքում հայտնաբերումների վերլուծություն և շարադրում, եզրակացության և առաջարկությունների կազմում:
7-րդ	Հետազոտության արդյունքերի հրապարակում:
8-րդ	Կլոր սեղան -հանդիպման կազմակերպում ներկայացնելու մշտադիտարկման արդյունքում ձեռք բերված հայտնաբերումները, եզրակացություններն և առաջարկությունները ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուներին, կրթության ոլորտի համապատասխան ներկայացուցիչներին:
9-րդ	Ծրագրի ավարտի հաշվետվության ներկայացում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» Հրատարակված նյութի տարածում Հայաստանի ԲՈՒՀ-երի և համապատասխան շահառու կազմակերպությունների շրջանում:

**Բյուջե / Հավելված Budget**

*(Խնդրում ենք ներկայացնել մանրամասն բյուջե՝ առանձին տողերով՝ ըստ դասակարգումների)*

*ԻՀԱ-ից պահանջվող գումարի չափը*

**Աշխատավարձ**

Ծրագրի ղեկավար- 90.000 դրամ ամսեկան, ընդամենը 2 ամսվա համար 180.000 դրամ

Ծրագրի մոնիտոր-78.000 դրամ, ընդամենը 2 ամսվա համար 156.000 դրամ

Ծրագրի մոնիտոր/ համակարգող-78.000 դրամ, ընդամենը 2 ամսվա համար 156.000 դրամ

Եկամտահարկ աշխատավարձերից 121.000 դրամ

Ընդամենը-613.000 դրամ

Ճանապարհածախս -13000 դրամ

Գրասենյակային պիտույքներ /սքաններ, թուղթ, գրիչներ, բլոկնոտ կլոր սեղանի համար/ -40.000 դրամ

Հրապարակումներ-90.000 դրամ

Կլոր սեղան/սուրճի ընդմիջում “Կոնգրես “Հյուրանոցում-109 200

Ընդհանուր 865 200 դրամ պահանջվում է դոնորից

«Էլեգիա» ՀԿ-ն որպես ներդրում կտրամադրի

Գրասենյակի տարածք – 100.000 դրամ երկու ամսվա համար

Համակարգիչներ- 3 հատ 300 000 դրամ 3 ամսվա համար

Անվարձահատույց հաշվապահ

Կից ներկայացվում է տեղեկանք վերը նշված ապրանքների և գրասենյակի արժեքի մասին:

Այլ տեղեկատվություն

Այլ կազմակերպություններ, որոնց ներկայացրել եք սույն ծրագիրը և ձեր դիմումի կարգավիճակը

Սույն ծրագիրը որևէ այլ կազմակերպության չի ներկայացվել:

Վերջին երեք տարիներին կազմակերպության կողմից իրականացված ծրագրերի ցանկ

#	Ծրագրի անվանումը	Ֆինանսավորող կազմակերպություն	Ծրագրի արժեքը	Ծրագրի ժամանակահատվածը
	ԱՄՆ շրջանավարտների և գիտնականների համաժողով."Բարեխճությունը գործողության մեջ.կրթութ յուն, սոցիալական պատասխանատվություն և զարգացում"	ԱՄՆ-ի դեսպանատուն Հայաստանում	4,533 \$	1 հուլիս- 31 դեկտեմբեր 2013

Ծրագրի հիմնական աշխատողներն են՝

1. Հարություն Ալեքսանյան –Ծրագրի ղեկավար
2. Մարիա Վարդանյան- Մոնիտոր/սոցիոլոգ
3. Սյուզան Պետրոսյան- Մոնիտոր Համակարգող
4. Զավեն Սուլթանյան-Հաշվապահ

Կից տես նրանց կարճ կենսագրականներն և ռեզյումները:

«Էլեգիա» մշակութային հասարակական ՀԿ դիմել է ՀՀ Գիտության և Կրթության նախարարությանը ԲՈՒՀ-երում մշտադիտարկում և հարցումներ անելու թույլտվություն ստանալու համար, որը կներկայացվի այս շաբաթ, ԻՀԱ՝ ստանալուն պես:

**«Էլեգիա» ՀԿ-ի նախագահ՝**

**Հարություն Ալեքսանյան**

21 մարտի 2016թ.

### **1. Հարություն Ալեքսանյան – Ծրագրի ղեկավար**

Հարություն Ալեքսանյանը երկար տարիներ 2007-20015թթ աշխատել է « Ինթեգրիթի Էքշն» Բրիտանական կազմակերպությունում, որպես Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Բարեվարքության Կրթական Ցանցի տարածաշրջանային մենեջեր; Ունի հակակոռուպցիոն ծրագրերի մշտադիտարկման և գնահատման հարուստ փորձ: Բարեվարքության և կոռուպցիոն ռիսկերի ուսումնասիրման գծով հրատարակել է բազմաթիվ հոդվածներ, գրքեր այդ թվում « Կոռուպցիոն Երևույթները Հայաստանի Կրթական Համակարգում և դրանց կանխարգելման ուղիները» Երևան 2007, 43 էջ.

### **2. Մարիա Վարդանյան- Մոնիտոր/սոցիոլոգ**

Ներկայումս աշխատում է , որպես ՀՀ Ազգային Ժողովի Գիտության և կրթության, երիտասարդության և սպորտի մշտական գործող հանձնաժողովի փորձագետ: Մասնակցել է Կենտրոնական Եվրոպական Համալսարանի և Նեպալում կայացած Բարեվարքության գծով դասընթացներ, ունի մշտադիտարկման և սոցիոլոգիական հետազոտություններ անցակցնելու հարուստ փորձ:

### **3. Սյուզան Պետրոսյան- Մոնիտոր Համակարգող**

Ունի համակարգելու և սոցիոլոգիական հարցման հարցաթերթիկների մշակման փորձ:

### **4. Զավեն Սուլթանյան-Հաշվապահ**